ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 411 - Ա **22 սեպտեմբերի 2016 թ.**

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱՍԱՐԻ ԲԱԽՏԻԲԵԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N 22-Ա ՀՐԱՄԱՆԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.5-րդ կետի <<ժա>> ենթակետի, 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N396-Ն հրամանով հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի>> 7-րդ և 16-րդ կետերի պահանջների խախտման պատճառով անվավեր ճանաչել <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բախտիբեկ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի 2016 թվականի սեպտեմբերի 8-ի N 22-Ա հրամանը:

2. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բախտիբեկ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Նաիրի Վարդանյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունել սույն որոշումից բխող իրավական ակտ և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ